109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МЭРИЯ ГОРОДА ЕРЕВАНА

«ԵՐԵՎԱՆԱՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ
ЗАО "ЕРЕВАНПРОЕКТ"

0010.Երևան-10, Փ.Բուզանդի փող.N1/3 Հեռ. 010-56-27-11 0010, Ереван-10, ул.П.Бузанда N1/3

02.06.2022 № 40/01-116
Ձեր N

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«Երևաննախագիծ» ՓԲԸ տնօրեն,
ճարտ.թեկնածու, պրոֆեսոր
Ս.Բ.ՕՀԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպության
ԿԱՐԾԻՔ

Արշակ Աշոտի Հակոբյանի «Երևան քաղաքի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային խնդիրները» թեմայով՝ ԺԸ.00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության քննարկմանը ներկա էին՝ ճարտ. թեկնածու, պրոֆեսոր Ս. Օհանյանը, Շ. Մանուչարյանը
Լսեցին՝ ԳՀԲ-ի ՆԳՃ ճարտ. թեկանծու, պրոֆեսոր Զ. Մամյանին

Արդի իրավիճակում Երևանի կանաչ գոտիների խնդիրները շարունակում են դիտարկվել որպես քաղաքի զարգացման հատակագծային կմախքի կարևորագույն տրամաբանական առանցքի մի ստատիկ մաս: Այնուամենայնիվ, ամեն օր աճող կառուցապատման խտությունը, ճանապարհափողոցային ցանցի փոփոխությունը իրենց ճշտգրտումներն են մտցնում քաղաքի հատակագծին կառուցվածքում:

Ատենախոսությունում հիմնավորված նշվում է, որ իսկզբանէ կանաչ գոտիները Երևանում առանձնահատուկ դեր են խաղացել բնապատկերային ընկալումների մասով: Սակայն վերջին տարիների քաղաքաշինական գործընթացները իրենց բացասական անդրադարձն են ունեցել դրանց վրա ինչպես մակերեսների կրճատման մասով, այնպես էլ բնապատկերային ամբողջական զանգվածի ընդհատումների մասերով: Տվյալ աշխատությունում ատենախոսը նպատակ է ունեցել

տարածքների պատմաճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունները և արդի ճարտարապետահատակագծային համալիր կազմակերպման վերաբերյալ առաջարկությունների և առաջնահերթությունների փաթեթի մշակումը:

Աշխատանքի առաջին գլխում ուսումնասիրվել է Երևանի քաղաքային միջավայրի հասարակական կանաչ տարածքների պատմաճարտարապետական զարգացման ընթացքը ու դրանց հետ տեղի ունեցած տրանսֆորմացիաները ըստ համապատասխան ժամանակաշրջանների և քաղաքի զարգացման առանձին փուլերի: Ներկայացվել են դեռևս 1800-ական թվականներից սկսած քաղաքի հատակագծային կառուցվածքում տեղ գտած կանաչ զանգվածները և դրանց դասավորության սկզբունքները: Վերլուծվել են վերոհիշյալ տարածքների զարգացումը և ընթացքում ավելացված ավելի կանոնակարգված ու հատակագծային հստակ կազմակերպվածություն ունեցող հատվածները, բերվել նրանց որոշ թվային բնութագրերը և այլն:

Երկրորդ գլխում ուսումնասիրվել է միջազգային փորձը, մասնավորապես 19-20-րդ դարերում Եվրոպայի քաղաքներում կանաչ զանգվածների հանրայնացման գործընթացը: Դիտարվել են նաև ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի խոշոր քաղաքների համար բնորոշ մոտեցումները կանաչ զանգվածների հատակագծային կազմակերպմանը ներկայացվող պահանջները: Հատուկ ուշադրություն է դարձվում այլևս քաղաքների հատակագծային կառուցվածքի պարտադիր մաս հանդիսացող հանրային տարածքներին:

Երրորդ գլխում քննարկվում են վերջին տարիներին տարբեր քաղաքների հասարակական տարածքներում իրականացրած համապատասխան նախագծերի ու ծրագրերի դրույթներ, կառուցվածքային ու գործառնական խնդիրների պարզաբանման օրինակներ, որոնք հնարավոր է կիրառել հայրենական պրակտիկայում:

Ընդհանուր առմամբ, հետազոտման խնդիրներն են Երևան քաղաքի.

- Կանաչ զանգվածների պատմաճարտարապետական զարգացման և ձևաստեղծման լուծումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը,
- Նախագծային կանաչ գոտիների և բնական միջավայրի պահպանման ու փոխակերպումների ուղիների վերլուծությունը,
- Հանրային տարածքների արդի ճարտարապետահատակագծային սկզբունքների կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

Հետազոտության մեթոդիկան Երևանի կանաչ զանգվածների ամբողջական ուսումնասիրության, հավաքագրված արխիվային փաստաթղթերի վերլուծության, նախագծերի ու հաստատված պաշտոնական փաստաթղթերի դասակարգման ու համակարգման վրա:

Աշխատանքի եզրակացություններում առաջարկվել է Երևանի կանաչ տարածքների պահպանման տեղեկատվական համակարգի կառուցվածք և ցանկ ըստ ժամանակագրության և ճարտարապետահատակագծային առանձնահատկությունների, որոնք

կարգավորումների, չափանիշների ճշտգրտման, կարգավիճակների սահմանման, փոփոխման և վերասկման համար: Մշակվել է Երևան քաղաքի կանաչ գոտիների ազդեցության սահմանների հատակագիծը, որը ցույց է տալիս հարակից գոտիների հասանելիությունը, հասարակական կանաչ տարածքների մեկուսացվածությունը: Հանրային սպասարկման մակարդակը կանաչ գոտիներում բարձրացնելու համար առաջարկվել այդ տարածքներում բաղադրիչներ հաշվի առնելով հարակից կառուցապատման գոտիները:

Ատենախոսի կողմից իրականացվել է մանրակրկիտ հետազոտական աշխատանք: Դիտարկված և վերլուծված օրինակները շատ ուսուցողական են և հետաքրքիր: Մշակված հատակագիծը կարող է մեծ նշանակություն ունենալ քաղաքի հետագա զարգացման ծրագրերի համար և ընդհանուր կանաչ զանգվածները մեկուսացվածությունից հանելու համար:

Ատենախոսության վերաբերյալ առկա են հետևյալ դիտողությունները:

Աշխատանքում առկա են որոշ խմբագրական թերություններ: Գրաֆիկական նյութերը կորող էին մշակվել ավելի մեծ մանրամասնությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ա.Ա.Հակոբյանի «Երևան քաղաքի կանաչ գոտիներում հասարակական տարածքների ճարտարապետահատակագծային խնդիրները» թեկնածուական ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, ունի պատշաճ գիտական մակարդակ և համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Աշոտ Արշակի Հակոբյանը արժանի է հայցած ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի տնօրեն,
ճարտ. թեկնածու, պրոֆեսոր Ս. ՕՀԱՆՅԱՆ

«Երևաննախագիծ» ՓԲԸ ԳՀՊ-ի ՆԳՃ,
ճարտ. թեկնածու, պրոֆեսոր Զ. ՄԱՄՅԱՆ